ԱՆՀՈԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադրբեջանի կողմից Հայկական ԽՍՀ-ի տնտեսական շրջափակումը արտակարգ իրավիճակ է ստեղծել, ասաց Հայկական ԽՍՀ Մինիստրների Սովետի արտաքին տնտեսական բաժնի վարիչ Վ. Ղազարյանը: Հանրապետությանը պատճառված նյութական վնասից բացի շրջափակումը հանգեցրել է աղետյալ գոտում շինարարական աշխատանքների ձախողման, որոնք կատարում են սոցիալիստական և կապիտալիստական շատ երկրներ, Կարմիր խաչը, միջազգային այլ կազմակերպություններ: Նրանք չեն ապահովվում ամրաններով, սարքավորումներով, շինանյութերով, խողովակներով, ցեմենտով:

Ավտոմոբիլային և դիզելային վառելիքի բացակայությունը հանգեցրել է այն բանին, որ այսօր Հայաստանում ստացվող շինանյութերի համարյա ամբողջ ծավալը ձեռքով է բեռնաթափվում: Հնարավորություն չկա դրանք շինհրապարակներ, այդ թվում նաև այն վայրերը հասցնելու համար, որտեղ աշխատում են արտասահմանյան երկրների ներկայացուցիչները: Այդ պատճառով շինանյութերը պահեստավորվում են բեռնաթափման վայրում:

Հանրապետությունում շրջափակման պատճառով ցեմենտի նկատելի պակաս է զգացվում: Դրա հետևանքով ԳԴՀ-ի, Չեխոսլովակիայի, Մեծ Բրիտանիայի և ուրիշ պետությունների շինարարները, որոնք գտնվում են աղետյալ գոտում, չեն կարողանում կատարել զրոյական ցիկլի աշխատանքները (հիմք դնելը): Այսպես, օրինակ, Ախուրյանում «Արմենիա-Ռեֆիր-Կրաշեն» կազմակերպությունը չի կարողանում սկսել 52 տնակների շինարարությունը:

Նույնպիսի վիճակ է «Սոս-Արմենի» (Ֆրանսիա) կազմակերպության շինարարների մոտ: Նրանք Ծիրակ գյուղում Հայաստանին նվեր հանձնելու համար պետք է կառուցեն 80 տնակ, բայց ցեմենտ չունենալու պատճառով ստիպված անգործության են մատնվել:

Սպիտակի և Գուգարքի շրջաններում Նորվեգիայի և ԳՖՀ-ի կարմիր խաչը դեռ չի սկսել աշխատանքները, քանի որ չկան կոմունիկացիաներ ցցելու համար անհրաժեշտ խողովակները:

ԳԴՀ-ի, Ֆրանսիայի, Նորվեգիայի, Հունգարիայի, ուրիշ երկրների հասարակական կազմակերպությունները, լավ իմանալով շրջափակման պատճառով ստեղծված իրավիճակը, որը խանգարում է նաև աղետյալ գոտում շինարարության ընթացքի արագացմանը, ստիպված եղան որոշում ընդունել ավտոտրանսպորտով մեր հանրապետություն ուղարկել երկաթբետոնե կոնստրուկցիաներ, շինանյութեր, չնայած նրան, որ դա հանգեցնում է վերը նշված նյութերի ինքնարժեքի զգալի թանկացման, բենզինի ծախսման ավելացման:

Նորվեգիայի շինարարները, որոնք Սպիտակում ավան և պոլիկլինիկա են կառուցում, աշխատանքների ճակատ չունենալու, սարքավորումները ուշ ստանալու պատճառով ստիպված էին ժամանակավորապես հայրենիք վերադառնալ:

Նորվեգիայի կառավարական մարմինները դիմել էին բեռները ոչ թե խորհրդային երկաթուղիներով, այլ ավտոմայրուղիներով տեղ հասցնելու հարցը լուծելու խնդրանքով:

Լենինականում «Անի» նոր շրջանում Ավստրիայի «Ռոգներ» ֆիրման և այդ երկրի առաջատար թերթերից մեկը՝ «Կուրիերը», պետք է իրենց հաշվին մոնտաժեն 110 տնակ, որոնցից յուրաքանչյուրի արժողությունը 500 հազար շիլինգ է: Արդեն կառուցվել է 67 տնակ: Հիմա մոնտաժային աշխատանքները չեն կատարվում վառելիքի բացակայության պատճառով:

Լենինականի Հաղթանակի փողոցում նախկին հանրախանութի տեղում Արևմտյան Բեռլինը և ԳՖՀ-ի «Մոդ Բուրդա» հանդեսի ղեկավարությունը հիվանդանոց և պոլիկլինիկա են կառուցում երեխաների ու հղի կանանց համար: Այստեղ էլ աշխատանքները դադարեցված են. չկան շինանյութեր:

Ավելի քան մեկ ամիս է անցել այն ժամանակվանից, երբ Լենինգրադից ուղարկվեցին Մեծ Բրիտանիայից ստացված բեռնարկղերը, բայց մինչև օրս դրանք Լենինական չեն հասել: Այդ պատճառով ձգձգվում է այն դպրոցի շինարարությունը, որ կառուցում է Մեծ Բրիտանիայի կառավարությունը: Շինանյութերը ժամանակին տեղ չհասնելու պատճառով դադարեցվել է նաև հիվանդանոցի և պոլիկլինիկայի շինարարությունը Լենինականում, որն իրականացնում է Շվեյցարիայի «Կոբիդաս» ֆիրման:

ՀՍՖՀ-ի «Ագրովոյեվոդինա» ֆիրմայի և «Զիմայ» գործարանի կոլեկտիվներում օրինական զայրույթ ու ցասում առաջ բերեց այն փաստը, որ Ադրբեջանում բարբարոսաբար թալանվել են 16-բնակարանանոց ութ բնակելի տնակ: Դրանք նախատեսված էին Ստեփանավանի անօթևան բնակիչների համար: Տնակները այնպիսի խղճուկ վիճակի էին հասցվել, որ դրանք ընդհանրապես հնարավոր չէ օգտագործել բնակության համար:

Պետք է նշել նաև մի ուրիշ դեպք: ԳԴՀ-ից բեռնավորված ավտոշարասյունը, որը վերջերս ժամանեց Հայաստան, կողոպտվել էր Ադրբեջանի տարածքում:

Լենինականում մանկական պոլիկլինիկա կառուցող ավստրիացի մասնագետները, նրանց հովանավորները, պատվիրատուները արդարացի զայրույթ են արտահայտում թանկարժեք ժամանակի կորստյան առթիվ, աղետյալ գոտու կարիքների նկատմամբ Ադրբեջանի տմարդի և անազնիվ վերաբերմունքի առթիվ:

Արտասահմանցի շինարարները, աշխարհի շատ երկրների ֆիրմաների ներկայացուցիչները, բուժաշխատողները, որոնք մարդասիրական օգնություն են ցույց տալիս երկրաշարժից տուժածներին, ասում են, որ այդ բարբարոսական ու տնտեսական շրջափակումը փաստորեն նպատակ ունի խեղդել հայ ժողովրդին, նշեց Վ. Ղազարյանը: Նրանք ընդգծում են, որ Հայկական ԽՍՀ-ի շրջափակումը հանցավոր ու թշնամական ձեռնարկում է, որը կատարվում է մեր օրերում, երբ Խորհրդային Միությունը ձգտում է իրավական հասարակության ստեղծման: Ադրբեջանի այդ ձեռնարկումը, ասում են նրանք, անտարակույս, կգցի խորհրդային պետության վարկն ու հեղինակությունը միջազգային ասպարեզում:

(Արմենպրես)